

Գյումրու քաղաքապետ պարոն Ս. Բալասանյանին  
«Շիրակ» ՀՌՀ գործադիր տնօրեն Ա. Ղանդիլյանից

«ՎԱՐՊԵՏՆԵՐԸ՝ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ...» մշակութային նախագծի  
համագործակցության առաջարկ

«Վարպետները՝ վարպետներին...» մշակութային մասշտաբային նախագիծը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի մարտի 25-ին:

Նախագիծը նպատակ ունի եւս մեկ անգամ ներկայացնել ու մեծարել Շիրակ աշխարհի պարարվեստի մեծագույն վարպետներին՝ ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Աղասի Շաբոյանին, Կառլեն Մադոյանին:



Հաշվի առնելով վերը նշված պարուսույցների անգնահատելի դերն ու վաստակը պարարվեստի բնագավառում ու հատկապես Շիրակ աշխարհի պարարվեստի զարգացման գործում՝ նախագիծը նախատեսում է ոչ միայն ուշադրություն հրավիրել նրանց գործունեությանը, այլև լրացնել տարիների բացն ու հայրենի քաղաքում ունենալ իրազեկող հուշատախտակներ՝ պարարվեստի երկու խոշորագույն ներկայացուցիչների շենքերին:

Նախատեսվում է ծրագիրն իրականացնել ու առավել հիշատակելի դարձնելու համար կազմակերպել մեծարման երեկո՝ Հայաստանի 5 լավագույն պարային համույթների մասնակցությամբ: Համերգային երեկոն նախատեսվում է իրականացնել Գյումրու դրամատիկական թատրոնում:

Մասնակցում են.

1. Հայաստանի Պարի պետական անսամբլը (գլխավոր բալետմայստեր ՀՀ վաստակավոր արտիստ Ասատուր Կարապետյան)
2. ՀՀ Մշակույթի նախարարության Վաստակավոր կոլեկտիվ «Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական անսամբլ»-ը (գեղ. դեկ. ՀՀ ժողովրդական արտիստ, Մովսես Խորենացու անվան շքանշանակիր Նորայր Մեհրաբյան)
3. ՀՀ Պաշտպանության նախարարության «Մարդաբապատ» պարային համույթը (գեղ. դեկավար Մուրադ Հակոբյան)
4. «Պարի եւ հոգու թատրոնը» (գեղ. դեկ. Սոֆի Դեւոյան)
5. «Կարին» ավանդական երգ ու պարի խումբը (գեղ. դեկ. Գագիկ Գինոյան)

Խնդրում ենք Ձեզ թույլ տալ փակցնել հուշատախտակները, ինչպես նաեւ իրազեկել եւ ապահովել Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ գործող պարային համույթների ներկայությունը՝ մարտի 25-ին պարարվեստի վարպետներ Աղասի Շաբոյանի ու Կառլեն Մադոյանի շենքերին հուշատախտակների բացման արարողության ժամանակ:



«Շիրակ» ՀՌՀ գործադիր տնօրեն Ա. Ղանդիլյան

Կից ներկայացնում ենք անհրաժեշտ հավելյալ տեղեկատվություն.

**Աղասի Շաբոյանը** ծնվել է Ալեքսանդրապոլում, 1921 թ-ին: 1941 թվականից եղել է Լենինականի ֆիլիարմոնիայի մենակատար և բալետմայստեր, 1949-1951 թվականներին՝ երկաթուղայինների Սևյանի անվան մշակույթի պալատի ժողովրդական պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար, 1951 թվականից՝ «Շիրակ» (2000 թվականից՝ Շաբոյանի անվան) ժողովրդական պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար

Նկարահանվել է «Շիրակի մեղեդիները» ֆիլմում:

Շաբոյանը ղեկավարել է Շիրակի, Ջավախքի պարային անսամբլներ, ստեղծել պարարվեստի իր դպրոցը:

ՀԽՍՀ վաստակավոր արտիստ է: Մահացել է 2004 թ-ին:

Հասցե՝ ք. Գյումրի, Գորկու 1042, բն. 19



**Գառլեն Մադոյանը** ծնվել է Ալեքսանդրապոլում, 1930 թ-ին:

Նրա ստեղծագործական գործունեության ամենաբեղմնավոր տարիները եղել են 1954-60 թվականները: Այդ ժամանակաշրջանում նա Հայաստանի երգի-պարի վաստակավոր անսամբլի մենակատարն էր: 1960 թվականից Սեւյանի անվան կուլտուրայի պալատի երգի-պարի անսամբլի մենակատար է եղել՝ ղեկավարելով նաև տեղի մանկական պարի խումբը:

Աշխատել է նաև տարբեր մշակութային պալատներում ու հանրակրթական դպրոցներում՝ ստեղծելով իր համույթներն ու խմբերը:



ՀԽՍՀ վաստակավոր արտիստ է: Մահացել է 2000 թվականին:

Հասցե՝ ք. Գյումրի, Գոգոլի 1/2



**Արամի Շարյան**

**ք.Գյումրի Գորկու 104 շ.բ. 19**



**Կառլեն Մադոյան**

**ք.Գյումրի Գոգուլի 1/2**